

ԳԵՂԱՄ ՄԻՆԻՍԻ ԲԱԴԱԼՅԱՆ

ՏԱՐՈՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (ԵՂՐԴՈՒՏԻ) ՎԱՆՔԻ 1445 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՆԴԱԿԸ (պատմա-աշխարհագրական ակնարկ)

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԸ ԵՎ ԿՈՆԴԱԿԸ. Տարոնի պատմա-մշակութային նշանավոր կենտրոններից մեկը՝ Ս. Հովհաննեսի վանքը, գտնվում էր Մուշ ֆաղափից 10 կմ արևմուտք, լեռնային գեղատեսիլ վայրում, Տարոն և Սասուն (Սահասուն) գավառների սահմանագլխին: Եկեղեցական ավանդությունը վանքի հիմնադրումը կապում է Թադեոս առաքյալի անվան հետ. որը Հայաստանում իր քարոզչական գործունեության տարիներին այստեղ եղողի (եղրդուտի) մշտադալար ծառի արմատների տակ թաքցրել է հոչակավոր «շիշ իւղոյն»՝ այն սրվակը, որի մեջ լցված սրբազան նարդոսով վերակենդանացած Ղազարոսի փուլը Մարիամն օծեց Քրիստոսին: 4-րդ դ. սկզբին Գրիգոր Լուսավորիչը երամայեց նույն վայրում վանք կառուցել, ուր ամփոփվեցին Հովհաննես Մկրտչի մասունքները (այստեղից էլ՝ անվանումը): Վանքը հայտնի է նաև եղրդուտի (եղրդի), Շիշ-Յուղո, եղեգեի, Արծվաքեր Ս. Նշան և այլ անվանումներով¹: Տարբեր ժամանակներում տիրույթներ ձեռք բերելով ո՛չ միայն Տարոնում, այլև հարակից մի շարք գավառներում, Ս. Հովհաննեսը դարձավ Հայաստանի խոշոր և հարուստ հռչակաբան վանքներից մեկը: 15-րդ դ. նրա նշանակությունն այնքան էր մեծացել, որ այստեղ հիմնվեց առանձին եպիսկոպոսություն՝ Կարապետ արքեպիսկոպոսի գլխավորությամբ: Այդ փաստը վավերացված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգորիս Ժ Զաւարեկյանց-Մակվեցու (1443-1485) 1445 թ. (Հայոց ՊՂԳ) կոնդակում: Թեև վերջինիս բնագիրը մեզ չի հասել (ոչնչացել է Մեծ եղեռնի տարիներին), բայց բարեբախտաբար պահպանվել են առանձին ընդօրինակություններ, որոնցից հայտնի են հետևյալները.

ա. Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող թիվ 784 ձեռագիր ժողովածուի (19-րդ դ.) 89ա-93բ թերթերում գտնվող և «Պատենն Սուրբ Յովհաննես վանուց հին մագաղաթեայ կոնդակին» խորագիրը կրող ընդօրինակությունը (այսուհետև՝ Ա)²:

¹ Թուրքերը Ս. Հովհաննեսի վանքը երջոքչում են Kızılkilise («կարմիր վանք»): Լատինատառ անվանումները վերցրել ենք արևմտագերմանական «Codex Kultur-Aktas»-ում (9-10 մասեր) գեղեղված բուրժական ռազմական ֆարտեզներից (մասշտաբ՝ 1:300 000): Վանքի մասին ափիլի հանգամանալից տե՛ս Հ. Ոսկեան, Տարոն-Տուրքերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 91-129:


² Օգտվելով աղբիքի՝ մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունն ենք հայտնում Վիեննայի Մխիթարյան միաբան Հ. Օգոստինոս վ. Սեփուլյանին, որը Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատան նախկին գլխավոր ավանդապահ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԻ ԹԵՄ (ըստ 144թ. կոնդակի)

ՄԱՍՇՏԱԲ 1:400000

ԵԳՂԱՆԵՐ ԱՌԽԱՂԱՏՈՒՄՆԵՐ

- Ս Հովհաննես վանքի թեմի մուտավոր սահմանը
- Պալատներ և զավառակներ
- Քաղաքներ
- Գյուղատեղատներ
- Բերդաշրջաններ
- Ավաններ և գյուղեր
- Վանք
- Լեռներ



ԹԵՄԱՏԻՎԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՍՇՏԱԲ
1:400000

բ. Մշո առաջնորդարանի նախկին Բարսեղյան Նազարեթ Մարտիրոսյանի 1914 թ. արտագրած օրինակը, որն ամփոփված էր նրա «Նշխարք Տարեռոյ» հրեփ տետրից բաղկացած գործում (ներկայացված էր Իզմիրլյան մրցանակի): Հանգամանքների բերումով այն հասել է Երուսաղեմ, որն էլ տասնամյակներ անց հրատարակել է Արա Գալաթյանը (այսուհետև՝ Բ)³.

գ. Հայտնի է, որ Նշված կոնդակը ժամանակին ընդօրինակել է նաև Արսեն Թոխմախյանը (1843-1892): Ի շարս այլևայլ ընդօրինակությունների և գրառումների (ծնագրական հիշատակարաններ, հիշատակագրություններ ևն), այն գտնվել է մի տետրում, որից էլ Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանը կարևոր հատվածներ է տպագրել իր հայտնի «Նոտարք Հայոց»-ում (այսուհետև՝ Գ)⁴: Ուշագրավ է, որ դրանց և վերջ Նշված օրինակների համեմատումն ի հայտ է բերել մեծ ընդհանրություններ հատկապես Վիեննայի «Պատենեն»-ի հետ: Այսպես, Ա.-ում և Գ.-ում հանդիպում են ամբողջական պարբերություններ, որոնք քացակալում են Բ.-ում: Այսուհետև, այդ օրինակների տարբերությունները, որպես կանոն, համընկնում են (իհարկե, կան նաև տարբերություններ): Դա հատկապես ակնառու է Ա. Հովհաննեսի թեմի թվարկվող բնակավայրերի անվանումներում: Օրինակ, Բ՝ «Փարխու», Ա. և Գ՝ «Փարխու» «Արեւել»-«Առջեւ», «Սմայատ»-«Սմրատ», «Սերկելիկ»-«Սե/է/րկելիկ», «Ստտոնց»-«Ատտոնց»-«Առտոնց», «Սեւան»-«Սիւան», «Ընդսլայիմ»-«Ընիսլայիմ», «Ատախ»-«Ադախ», «Թըրըլ»-«Թոնըլ», «Ճօգիկ»-«Ճաղիկ» < «Ճաւգիկ», «Ընկուգակ»-«Ընկուգակ», «Մարընոր»-«Մոսընոր», «Հարութոյ»-«Հարութիոյ», «Կասգէ»-«Գագէ» ևն: Թե՛ Ա.-ում և թե՛ Գ.-ում Ուտուղի և Կորեկչրի միջև հիշատակվում է «Յողկունք (Յու-») գյուղը: Գ.-ում հատուկ նշվում են 19-րդ դ. վերջին ֆառորդին ավերված կամ այլազգաբնակ դարձած գյուղերը: Նույն բնակավայրերը ցույց են տրված նաև Ա.-ում (աստղանիշով): Եվ վերջապես Ա.-ում, «Պալենեն» գյուղանվան վերևում գրված է «Անթղու Առաքելոյ թեմ», իսկ Գ.-ում, նույն տեղում, նշվում է «Անթղու» առանձին բնակավայր, ինչը թուրքիմացություն է (թերևս, ընդօրինակողի մեղմով): Մեր Նշած փաստերը լուրջ հիմքեր են տալիս ենթադրելու, որ Բ.-ն, եթե անգամ Ա. Թոխմախյանինը չէ, ապա գոնե արտագրություն է նրա օրինակից:

Հայոց վանքերի պատմության գիտակ և ուսումնասիրող Համազասպ Ոսկյանը կոնդակում տեղ գտած հակասություններից և անհշտություններից եզրակացնում է, որ դրանք ամենայն հավանականությամբ հետևանք են տեղի հոգևորականների հետագա միտումնավոր կեղծիքների և հետապնդել են մի նպատակ՝ հիմնավորել նրանց սեփականատիրական իրավունքները, դրանք պաշտպանել հարևան միաբանությունների հնարավոր հավակնություններից: Այս միտքը, անշուշտ, անհիմն չէ: Ա. Հովհաննեսի վանքապատկան տարածքի մեջ մտնող մեծ թվով

Գևորգ Տեր-Վարդանյանի խնդրանքով պատրաստեց և ներկան ուղարկեց թիվ 784 ձեռագրի համապատասխան թերթերի լուսագատեններ (Գ. Բ.):

³ Տե՛ս Սահակ Ա. Մուրատեան, Նազարեթ Պ. Մարտիրոսեան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ա. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, իմր. Արա Գալաթեան, Երուսաղեմ, 1907, էջ 199-204:

⁴ Տե՛ս Նոտարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդի վարդապետի Փիրղալեմեան Տոսբեցոյ Վարագայ վանաց վանականի, Կ. Պոլիս, էջ 139-145 (ա. ք.):

բնակավայրեր գտնվում էին զգալի հեռավորության վրա և ժամանակի ընթացքում կարող էին անցնել մոտակա վանքերին: Դա թույլ չտալու համար աներածնշտ էր ձեռքի տակ ունենալ իրավական փաստաթուղթ, որպիսին է կոնդակը: Ի դեպ, վիճենցայի Մխիթարյանների Մատենադարանի թիվ 784 ձեռագրի պատճենը ցույց է տալիս, որ Ս. Հովհաննեսի միաբանությանը հաջողվել էր տիրանալ Ադձնիֆի նշանավոր Աթախու (Անթրոնու) Ս. Մակարայեցվոց կամ Ս. Առաքելոց վանքին պատկանող զորոջ գյուղերի: Այդ բայց «օրինականացնելու» համար նույնպես անհրաժեշտ էր իրավական հիմք: Մեր կարծիքով՝ գուր չէ, որ կոնդակում մատնանշվում է, թե Գրիգոր Մակվեցին սոսկ վերահաստատել է «զկարգեալ վիճակն արդոյ հռչակաւոր ուխտիս ի Սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէն, այլեւ՝ ի Մեծէն ի Սահակայ Պարթեւէն...», եւ յետոյ վերստին հաստատեալ ի Յոհանն Ծձնեցւոյն... (ընդգծումը մերն է-Գ. Բ.)»⁵: Հայ Եկեղեցու մեծերի հիշատակումն արդեն պետք է օրինականացնեն սահմանյալ թեմի նկատմամբ Ս. Հովհաննեսի «ի վերուստ անտի» ունեցած իրավունքները: Հարկ է նշել, որ վանքում պահվում էին երկու ուրիշ նմանատիպ փաստաթղթեր: Դրանցից առաջինը, որ շնորհիվ էր խալիֆ Ալին, թվագրված էր, սակայն, Հիջրայից առաջ, ուստի կեղծ էր: Մյուսն ավանդաբար վերագրում էին Լեոնիքեմուրին, որ սակայն կրկին պատմական հիմք չունեն: Ամենայն հավանականությամբ այդ կոնդակները ևս նպատակ ունեին պաշտպանելու վանքի սեփականությունը, այս անգամ արդեն Հայաստան լցված ֆրդական և թուրքմենական զանազան ավագակարարո վաչկատուն ցեղերից: Ինչէւ, մատնանշելով վերոհիշյալ փաստաթղթերում, և մասնավորապես 1445 թ. կոնդակում առկա թուրքիմացություններն ու հակասությունները, Հ. Ոսկյանը հզրակացնում է, որ դրանցում կան նաև «պատմական ուղիղ կետեր»⁶: Ընդ որում, կոնդակը մեծ կարևորություն ունի հատկապես պատմական աշխարհագրության տեսանկյունից: Այստեղ մեծ թվով գավառների ու գավառակների, բնակավայրերի, անգամ ագարակների, հանդամասերի ու արտերի մասին հիշատակություններն ուշագրավ տեղեկություններ են պարունակում պատմական Հայաստանի հարավ-արևմտյան մի ընդարձակ տարածքի տեղանվանագիտության (տոպոնիմիկայի), ինչպես նաև վարչա-հաղափական, էթնո-դեմոգրաֆիական, սոցիալ-տնտեսական որոշ հարցերի վերաբերյալ:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹԵՄԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԳԱՎԱՌՆԵՐԸ. վանական կոնդակներում սովորաբար հանգամանալից նշվում են տվյալ թեմի սահմանները, ընդգրկած տարածքն ու գավառները՝ իրենց բնակավայրերով, կալվածքներով, հանդամասերով, արտավայրերով ևն: Այդ տեսանկյունից քաջառություն չէ նաև ֆենարկվող փաստաթուղթը: Ընդ որում, կոնդակի հաղորդած տվյալները հնարավորություն են տալիս, որոշակի դժվարություններով հանդերձ, ֆարտեզագրական նյութի հիման⁷ վրա բավական ճշգրիտ կերպով

⁵ Մեկ այլ տեղ հիշվում են ներսես Մեծը և Գրիգոր Տաթևացին: Ի դեպ, թեև կոնդակը ստորագրել է Կաթողիկոսը, սակայն հայտնի չէ՝ կնքված եղե՞ն է, թե՞ ոչ:

⁶ Ոսկյան, էջ 108:

⁷ Բացի արդեն հիշատակված արևմտագերմանական «Atlas»-ից, օգտվել ենք նաև հետևյալ ֆարտեզներից. «Копия турецкой карты Азиатской Турции, изданной в

որոշել Ս. Հովհաննեսի թեմի սահմանները 15-րդ դ. 1-ին կեսին: Ներկայացնում ենք այդ հատվածը. «Այսիցն, նախ՝ ի Զրոյ Հինջիմոյ իջանէ ի Մեղրագետ, Արածանի գետովն, որ Եփրատ անուանի, Սեռոֆով լերամբ՝ մինչեւ ի Զուրն Ճապաղի անունովն եւ Ռապատիւ մինչեւ ի գիւղն, որ Յիսին կոչեն, Բաղին գաւառաւ, եւ Սեւան դղեկաւ, Տպնով եւ Ապարաւն, Աթաղ դղեկաւն, Թըրջըլ անունաւ՝ Միերնկաւն հանդերձ, Սրգոնրանով, Նփրկերտաւ, որ է Մուֆարդին՝ Մարտիրոսաց քաղաքն, Պաթմանաւ եւ Ռապատ անհիովն, Փարչանց գետովն, Պողոտային՝ Կողբայ գաւառան հանդերձ, ընդ առաջ Անթանիոյ, ի յարեւմտեան կողմանէ Զրովն Հինջիմոյ շրջի ի դաշտն Տարաւնոյ: Այսոքիկ կարգեալ եւ սահմանեալ վիճակք սուրբ հոգակաւոր մեծաստանիս, որ Շիշ իւղոյ վանս յորջորջի»⁸: Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ թեմական սահմաններն ընթացել են խիստ որոշակի կարգով. շրջանաձև՝ արևմուտք-հարավ-արևելք-արևելք-հյուսիս: 1-ինը հիշվող Հինջիմո-ջուրը («Զուրն Հինջիմոյ»), փաստորեն, կազմել է Ս. Հովհաննեսի թեմի հյուսիս-արևելյան եզրասահմանը: Մեր կարծիքով, դա վանքի արևելքում գտնվող Փեթար գյուղի մոտից սկիզբ առնող գետակն է (այժմ՝ Հաջ), որն այնուհետև իջնելով Մշո դաշտ՝ Մեղագոմ կամ Մղագոմ գյուղի մոտ միանում է Մեղրագետին (պատմ.՝ Մեղ, այժմ՝ Karasu): Այնուհետև սահմանն ընթացել է վերջինիս հոսանքով՝ շարունակվելով Արածանի գետով (Արլ. Եփրատ, այժմ՝ Murat): Արածանին Ս. Հովհաննեսի հյուսիսային եիմանական սահմանն էր, քանի որ նրան ենթակա քնակավայրերը, բացառությամբ մի փոքր մասի, գտնվում էին գետից հարավ (ձախափնյակում)⁹: Արածանու հոսանքով իջնելով հարավ՝ թեմական սահմանը, Ուռուղ գյուղ չհասած, շրջվել է արևմուտք և Սեռոֆով լեռով ձգվել մինչև Ճապաղջուր («Զուրն Ճապաղի»)՝ ընդհատվելով Գինեկ (այժմ՝ Gönök կամ Gönük) գետի մոտ: Կասկած չի կարող, որ վերոհիշյալ Սեռոֆովը ներկայիս Աբրոխ-դաղ լեռնաշղթան է, ափի միջոց՝ վերջինիս Արածանուն գոգահեռ ձգվող հարավային մյուղը¹⁰: Գինեկի հոսանքով իջնելով հարավ և հատելով Ռապատ արտավայրի (թրք.՝ Rabat-düzü) տարածքը, սահմանը հասել է Արածանուն և կրկին թեմական արևմուտք: Շարունակելով ընթանալ նույն ուղղությամբ՝ այն կտրել է Սևան բերդաքաղաքից հյուսիս գտնվող Սևան-Մադենի լեռները և հասել մինչև Բալահովտի Թրիս (թրք.՝ Tırha) գյուղը՝ Արածանու ափին: Սա Ս. Հովհաննեսի թեմի ծայր արևմտյան սահմանակետն էր: Այս շրջանը կոնդակում կոչվում է Բաղին (համանուն գյուղի

масштабе 1:200 000 в 1330 году Гиджры, т.е. в 1911-12 гг.», м. 1:210 000, Тифлис, 1915-17, IV-15, V-13-14 պլանշետները: «Eastern Turkey in Asia», Scale 1:250000, Sheet 18, [London], 1920: Կարմիր քանակի գլխավոր շտաբի 1970-80-ական թթ. հրատարակած քարտեզի 10-37-11, 12, 10-37-16, 17, 18 պլանշետները (մասշտաբ՝ 1:200000):

⁸ Ա. թիքթ 91աբ: Բ, էջ 202: Գ, էջ 143: Տվել ենք տեղանունների ստուգված և նշտված տարբերակները (Գ. Բ.):

⁹ Արածանուց հյուսիս ընկած քնակավայրերը մտնում էին Ս. Կարապետի թեմի մեջ:

¹⁰ Տե՛ս ուղևորական 10-վերստանոց քարտեզ, II-81 պլանշետ: Վերոհիշյալ լեռնանշտը ներկայումս կոչվում է Սոլխան (նաև՝ Սոլադան)՝ ամենայն հավանականությամբ համանուն դալիկական ցեղի անունով (թրք.՝ Solhan-dagı):

անուցով, չշփոթել Պաղմատուն գավառի հետ, որը գտնվում էր ավելի հյուսիսում: Թրխեի մոտից շրջվելով հարավ-արևելք՝ սահմանը վերջինիս գետակով, ապա նույնանուն ձխին (հետագայում՝ Սրին) լեռան և գյուղի մոտով իջել է Անգեղ-տուն՝ ներառնալով նրա հյուսիսային մի փոքր մասը: Այնուհետև սահմանը շրջվելով արևելք՝ հասել է Տիգրիսի Տրեի (Ջիրեհեն) և Ամբար վտակները, ընդգրկել Սիլվանի կամ Սիլվանի (հայկական աղբյուրներում՝ «Ներքին դաշտ») հյուսիսային լեռնոտ հատվածը, այդ թվում՝ Նփրկերտ կամ Մուֆարդին (Միաֆարկին, այժմ՝ Silvan) ավանը և հասել Բաթման (այստմ. Բադրիթ) գետ: Վերջինս հատելով ամենայն հավանականությամբ նշանավոր Փրեթաթման կամրջի մոտ՝ թեմական սահմանը ներառել է Սանասուն-ջրի ծախսփնյակում գտնվող փոքրիկ Ռապատ «ճահիթան» (գավառակ, գյուղախումբ): Սա Ս. Հովհաննեսի թեմի ծայր հարավ-արևելյան կետն էր: Այնուհետև սահմանն ընթացել է «Փարչանց գետով», Պողոտայի՝ Կողբայ գառառան համդերծ: Սա, բերևս, կոնդակի առավել դժվար որոշելի հատվածներից է, ինչը կապված է Փարչանց գետի և «Պողոտայ»-ի տեղադրության հետ: Թվարկման հերթականությունը ենթադրել է տալիս Փարչանցը նույնացնել Ռապատ ճահիթայի հյուսիսային սահմանագլխով հոսող այժմյան Սեբան կամ Սեյբանե (թրք.՝ Seybanc) գետակի հետ: Հաջորդը հիշվող «Պողոտայ»-ն, մեր կարծիքով, Հագգո գյուղաբաղաբից (այժմ՝ Kozluk) Խաբըլդոզ (Գապընդոզ, այժմ՝ Sasun) ձգվող ճանապարհն է: Ամենայն հավանականությամբ իր կարևորության և բարեկարգ լինելու պատճառով այն կոչվել է ուղղակի «պողոտա», մանավանդ եթե հաշվի առնենք, որ Սասունում գերակշռում էին լեռնային դժվարանցանքի արահետները՝ ու կածանները: Ուշագրավ է, որ անմիջապես հետո հիշվում է Կողբ գավառը, որն ավելի ուշ հայտնի էր Խուլփ (Կողբ>Կուլփ>Խուլփ) անունով (տես ստորև) և գրավում էր զգալիորեն արևմուտք հոսող Կողբաձոր (Խուլփ) գետի հովիտը: Այս տվյալն ուղղակիորեն ցույց է տալիս, որ 15-րդ դ. կեսերին Կողբն ուներ բավականին մեծ ընդգրկում՝ հասնելով մինչև Սանասուն-ջուր և ներառնելով հետագայի Խիամ գավառակի տարածքը:

Փարչանց-Պողոտա հատվածով թեմական սահմանն ամենայն հավանա-կանությամբ հասել է մինչև Սանասուն-ջրի Բացի (թրք.՝ Bekis) ճափնյա վտակին, որի հոսանքով շրջվել հյուսիս-արևմուտք: Փաստորեն Բացին եղել է Սուրբ Հովհաննեսի և Սասունի եղակավոր Գոմոց կամ Մատին-Առաքելո վանքի թեմերի սահմանաբաժանը: Շարունակելով ընթանալ նույն ուղղությամբ՝ սահմանագիծը ձգվել է Ջանդուս գետակով, հասել Տավուրիկի-ջուրը (Բաթմանի վտակներից), այնուհետև՝ բարձրացել հյուսիս, բաժանելով Իշխանաձորը Տավուրիկից, և Կեփին ու Անդոկ լեռնագագաթներով հասել Կողբաձորի վերին ակունքները: Այստեղից, ինչպես հաղորդում է կոնդակը, այն ընթացել է «ընդ առաջ Անթա-նիոյ»¹¹, որը Ս. Աթանագիների (Անթանիայի) վանքն է՝ Սիմ-սարի հարավային ստորոտին¹²: Կտրելով Սիմ-սարը՝ վանքի թեմական սահմանը, արդեն հիշատակ-

¹¹ Համգիպում է նաև «ընդ առուով» տարբերակումը (տե՛ս Գ. էջ 149):

¹² Այս վանքը գտնվում էր Սասունի Գեղաշեն գյուղի մոտ, Կողբաձոր (այդ մասում՝ Սեմալ) և Շատախ գետերի ջրբաժանում (տե՛ս «Тарон в древности и в средние века» ֆարսեզը Ղ. Այվազյանի «История Тарона и армянская литература IV-VII вв. (Ереван, 1976). գրքում):

ված Հիմնչինո-ջրով դարձյալ մտել է Տարոն («ջրջի ի դաշտն Տարաւնոյ»): Այսպիսով, նշված սահմաններում Ս. Հովհաննեսի թեմն ընդգրկում էր Տարոնի հարավ-արևմուտքը, Մոփիի մի մասը և հյուսիսային Ադճնիքը՝ մինչև Սանասնո-ջուր:

Կարևոր նշանակություն ունեն վանքին հեթանոսական և քաղաքական կենտրոնի մասին հանդիպող տեղեկությունները: Կոնդակը հաստատում է, որ նորընծա Կարապետ արքեպիսկոպոսն առաջնորդելու էր «Ջրոբխիկն եւ իւր երկրին, Մուֆարդնայ եւ իւր երկրին, Այեմանկին եւ իւր գաւառացն, եւ Նախիալին, որ եւ Կողք անուանի, Գազկու եւ իւր գաւառացն, Խաչկաւնաց եւ իւր մզրային, Կճնան եւ իւր գաւառին, եւ մասն ինչ ի Տարաւն գաւառին»: Սրանցից բացի, թեմի սահմանները նշելիս, հիշատակվում են նաև Բաղին գավառը, Միհրանիկը (գործիական հոլովով՝ «Միհրնկաւն») և Ռապատ «նախիան»¹³: Այժմ ավելի մանրամասն:

ա. ԶՐՈՐԸՆԻԿ. Քրդերեն՝ Ziriqan¹⁴: Քրդական զրուրկի (zirîq) ցեղի տիրույթն էր՝ օջախը (հշխանությունը), որտեղից էլ՝ անունը: Կենտրոնը Թարջիլ (Թերջիլ, Թըրըրլ) բերդն էր, որի անունով նույնպես հայտնի էր: Զրուրկցիներն Ադճնիքում հաստատվել էին բավականին ընդարձակ տարածքի վրա՝ բաժանվելով մի քանի նյուղերի՝ Աթախ, Թարջիլ (Ջրոբխիկ), Ռուրդաֆան, Դերգնի կամ Դարգնի¹⁵:

բ. ՄԻՀՐԱՆԻԿ. Թրք.՝ Mihrani, Mihraniye: Ընկած էր Զրուրկիկից արևելք՝ Միհրանի (Մեհրանի) ավանով: 15-րդ դ. 2-րդ կեսին, ինչպես երևում է կոնդակից, կազմել է Զրուրխիկ-Թարջիլի մի մասը (գավառակը)¹⁶: Ավելի ուշ (16-րդ դ.) Միհրանիկն առանձնանալով՝ կազմել էր զրուրկցիների նյուղերից մեկի օջախը:

գ. «ՄՈՒՑԱՐԴՆԱՍ ԵՐԿԻՐ». Համանուն ավանի (նաև՝ Միյաֆարկին, ֆարկին, պատմ.՝ Նփրկերտ) շրջակա գավառը: Ինչպես ցույց են տալիս կոնդակի տվյալները, Ս. Հովհաննեսի թեմի մեջ էին մտնում մինչև Քաղիթթ (Բաթման) գետն ընկած գյուղերը:

դ. ՍԼԵՄԱՆԻԿ. Սուլեյմանի քրդական ցեղի անունից (քրդ.՝ Silêmanî կամ Silîvanî թրք.՝ Silvanî)¹⁷: Շարաֆխանի տվյալներով, այս ցեղն Ադճնիքում սկզբնապես հաստատվել էր Կողքաձորի և Տալկորիկի-ջրի միջագետքում գտնվող Խոխ հովտում¹⁸: Վերջինս հիշատակվում է դեռ վարդան Արեւելցու «Աշխարհացոյց»-ում (13-րդ դ.): «Կողովիտ (ընդգծումը մերն է-Գ. Բ.) եւ Մանախու ձորն ի Սասուն է» պարբերությունում¹⁹: Կարծում ենք, որ այստեղ էլ պետք է

¹³ Ա. Բ. 91աբ: Բ, էջ 201-202: Գ, էջ 143:

¹⁴ Տեղանունների քրդական տարբերակներն՝ ըստ Հ. Օրբելու համակարգի (տե՛ս Օրբելի И. А., Фольклор и быт Мокса, Москва, 1982, стр. 141-143):

¹⁵ Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой, М., 1967, т. 1, стр. 300: Ի դեպ, Դերգնին նույնպես կաշվել է Զրուրկան (սումանյան 16-17-րդ դդ. ցուցակներում՝ Zeriki):

¹⁶ Հմմտ. «Թըրըրլ անանան՝ Միհրնկաւն հանդերձ» պարբերությունը (Գ. Բ.):

¹⁷ Шараф-хан, стр. 500:

¹⁸ Ն. տ., стр. 314, 526:

¹⁹ «Աշխարհացոյց վարդանայ վարդապետի», քննական հրատարակություն Հայկ Պերպերեանի, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1980, էջ 21:

տեղադրել Սլեմանիկ գավառը՝ նրա մեջ ընդգրկելով նաև Գաղիքի (այդ հատվածում՝ Թեփե կամ Գըր) աջափնյակում գտնվող Սլեմանի ավանի շրջանը՝ Մուֆարդից հյուսիս-արևմուտք։ Հետագայում սուլեյմանիները հայ ավատատերերից աստիճանաբար խլեցին Կիճնից (Գեճնից) մինչև Դիարբեքի ընկած տարածքի վրա գտնվող բազմաթիվ բերդեր ու գավառներ, այդ թվում Կիճնը (Գեճնը), Կողբը (Կուլփը), Գազկե (Ջասկե), Ռապատը²⁰, Մուֆարդի, Բոթիանը (Բիդիանը)²¹ ևն։ Ամենայն հավանականությամբ այս ցեղի տիրույթներն արևմուտքում հասնում էին մինչև Ակլ (պատմ.՝ Անգղ) բերդաֆառաքի շրջանը։ Դրա վկայությունն են Տիգրիսի աջ ու ձախ ափերին մեր օրերում էլ պահպանված Սուլեյմանց (թրք.՝ Süleymanan, ֆրգ.՝ Silēmanā) և Սեման (թրք.՝ Selman) գույգ գյուղերը։ Ամենայն հավանականությամբ սուլեյմանիներին են ենթարկվել նաև Հալեհն և Լեհե՝ իրենց շրջաններով։ Սլեմանիկ տեղանունը պահպանվել է Սիլվան կամ Սիլվան ձևով։

Ե. ԿՈՂՐ ԿԱՄ ՆԱՀԻԱ. Արդեն ճշել ենք, որ այս գավառը 15-րդ դ. ընդգրկում էր Կողբաձոր և Սանասնո-ջուր գետերի միջև ընկած շրջանը։ Ինչպես տեսանք, այն համապատասխանում էր Սասունի Խուլփի (Կողբի աղավաղումից) և Խիանք գավառակներին։ Կոնդակում հանդիպող երկրորդ անվանումը ամենայն հավանականությամբ հանդես է եկել սուլեյմանիների նվաճումից հետո (արաբ.՝ حبلان) «շրջան, մարզ, երկիր, գավառ, գավառակ, թրք.՝ նաև «գյուղական համայնք», «գյուղախումբ»։ Իմա՝ բուն Սլեմանիկի գավառակը)²²։

Գ. «ԳԱՋԿՈՒ ԳԱԻԱՒ» Գազկե (Կասե, Գասգե, թրք.՝ Cāske կամ Cıksı) գյուղաֆառաքի շրջանը, Կողբից արևմուտք՝ նրա անմիջական սահմանակցությամբ։ Ղ. ԻՃԵՆԿՅԱՆԸ հիշում է Իսյան (Իսփյան) կամ «Պանօֆոց երկիր» անուններով։ Տեղի ռազմատեղից, բայց ֆրդախոս հայերը, 18-19-րդ դդ. պառպանել էին իրենց անկախությունը։ Նույն հեղինակի մեկ այլ վկայությամբ՝ «այս երկիր Պանօֆոց» է թեմ Սուրբ Յոհաննու, որ ի Մուշ»²³։ Հետագայում՝ Հավետիկ (ֆրդեբեն՝ Havēdan)²⁴։

Ջեռագրերում հանդիպում են նաև այլ տարբերակներ՝ «Կոզովիտ/դ», «Կոկովիտ», «Գոգեովիտ» (իմա՝ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2292(81ա), 2370(237բ), 2748(124ա), 3887(228բ), 5123(180բ), 6485(82ա) ևն)։ Կարծում ենք՝ Շարաֆ-խանի հիշատակած ձևը պահպանվել է այդ շրջանի Գրեխոխի գյուղանվան մեջ (ֆրգ.՝ «Խոխի բլուր»)։

²⁰ 1487 (ՋԺՋ) մի Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Շնորհիւ Տեառն, կատարեցի զգիրս Բրիտոստական մատենիս... ի գառս Սլեմանիկ ի քաղաքս որ այժմ կոչի Ռապատ...» (ընդգծումը մերն է — Գ.Բ.)։ Տե՛ս Բ, էջ 123։

²¹ Սարգս-ձառ, Եր. 314։

²² Լժմո. Բագրևանդի «Նահեա» կամ «Նահին» գավառը, որն անջատվել էր Ալաշկերտից՝ ընդգրկելով Կարափլիսայի շրջակա բնակավայրերը։ Ի ղեկ. 18-րդ դ. վ—19-րդ դ. սկ. այն երբեմն կոչվում էր նաև Ալաշկերտ (Ղ. ԻՃԵՆԿՅԱՆ, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հտ. Ա, վեճեռիկ — Ա. Ղազար, 1808, էջ 115)։

²³ Ն. տ., էջ 245։

²⁴ Հարկ է ճշել, որ թե՛ պանոֆի (բանուֆի), թե՛ հավեդի (հավեյդի) սուլեյմանի ցեղի

է. ԿԻՆՃ(Ն). Թրք. Genç կամ Genç: Տարոնից արևմուտք: Ինչպես երևում է կոնդակի տեղեկություններից, Ս. Հովհաննեսին էին պատկանում Արածանուց հարավ ընկած գյուղերը (միայն մի փոքր մասը գտնվում էր հյուսիսում, այն էլ՝ ամսիջապես գետափին): Հիշատակվող «Խաչկաւնք»-ը ոչ այլ ինչ է, եթե ոչ Կիցնի բնակավայրերից մեկը: Ըստ երևույթին Կիցնի մեջ էին մտնում նաև ավելի հարավում՝ Սատում գետի հովտում ընկած և կոնդակում հիշվող մի շարք բնակավայրեր, որոնք ավելի ուշ կազմում էին Փեջարի գյուղախումբը (դրանց մասին՝ իր տեղում):

ը. ԲԱՂԻՆ. Պատմական Բալահովիտ գավառի (Մոփի) հարավային շրջանը, ծխին (Արին) լեռից մինչև Արածանի: Այդ մասը հայտնի էր նաև Աշմուշատ անունով (պատմ. Արշամաշատից):

թ. ՌԱՊԱՏ ՆԱՀԻԱ. Թեմի սահմանները նկարագրելիս ճշել ենք, որ մի փոքր շրջան էր՝ Սանասոն-ջրի ձախափնյալում: Ավելի ուշ, դառնալով նույն քրդական ցեղի բոշտեղին, վերանվանվեց Բագրաւն (Բաքրան):

ժ. ՏԱՐՈՆ. Ս. Հովհաննեսի թեմի մեջ էին մտնում գավառի ծայր հարավ-արևմտյան՝ վանքին անմիջապես սահմանակից, գյուղերը՝ Հինշինո-ջրից մինչև Կիցն:

Ինչպես տեսնում ենք, այս տեղեկությունները կարևոր են ոչ միայն վանքի թեմի վերաբերյալ պատկերացում կազմելու, այլև Մեծ Հայքի հիշատակած նահանգների, և հատկ.՝ Ադձնիքի, 15-րդ դ. 1-ին կեսի վարչական բաժանման ուսումնասիրության համար: Այն էապես տարբերվում էր հին, աշխարհացույցյան գավառաբաժանումից՝ արտահայտելով տվյալ ժամանակահատվածում այս շրջանի էթնո-ֆաղափական իրավիճակը: Սելջուկյան և, մանավանդ, մոնղոլական արշավանքների ընթացքում (11-13-րդ դդ.) զգալի թվով քրդական և թուրքմենական վաչկատուն ցեղեր հաստատվեցին Հվ. Հայաստանում, այդ թվում և վերոհիշյալ գավառներում՝ աստիճանաբար ենթարկելով տեղի նստակյաց բնակչությանը (գերազանցապես հայ, նաև՝ ասորի): Ճիշտ է, 14-15-րդ դդ. քրդ. ցեղերն իրենք ընդունում էին թուրքմեն ակ-կոյունլուների, իսկ ապա՝ կարա-կոյունլուների գերիշխանությունը, սակայն վերոբերյալ փաստերը ցույց են տալիս, որ հիշյալ ժամանակաշրջանում նրանք ձեռք էին բերել այնպիսի ազդեցություն, որ արդեն իրենց անուններն էին փոխանցել ժառանգական տիրույթների վերածված մի շարք գավառների: Անգամ ավանդապատ Հայ եկեղեցին ստիպված էր արձանագրել այդ փաստը՝ նախապատվությունը տալով օտար անվանումներին (Ջըռըխիկ, Միհրանիկ, Սլեմանիկ ևն): Փաստորեն այս շրջանից սկսվել էր Հայաստանի «քրդացումը», որը հատկապես մեծ թափ ստացավ օսմանյան նվաճման ժամանակ: Այս գավառներում էր, ուր նախապես ստեղծվեցին քրդական կիսանկախ ժառանգական իշխանությունները: Հարկ է նշել, որ նոր վարչական բաժանումը կենսունակ գտնվեց՝ հարառակելով մինչև 19-րդ դ. 1-ին կեսը: Հետևաբար եղավ այն, որ տեղի հայ բնակչության մի մասն աստիճանաբար դուրս մղվեց կամ ուժացվեց նոթեկ քուրդ տարրի կողմից: Նույնը տեղի ունեցավ ավելի հյուսիսում գտնվող գավառներում, հատկապես Կիցնում (Գեցն), ուր 16-19-րդ դդ. իշխում

նյութերն էին (Տե՛ս Սարաք-աօն, ԵՊՐ. 314): Ի դեպ, 1-ինը պահպանվել է Կողբաձորի վերին հոսանքի շրջանում գտնվող Բանոկ կամ Պանոկ գյուղի անվան մեջ:

էին դմել (դըմիկ կամ զազա) իրանական ցեղերը: Վերջիցս մինչև Բալախովիտ և Դերսիմ իրենց ենթարկելով բնիկների՝ հետագայում հոծ հատվածներով օուկեցին նրանց: Զուր չէ, որ դմիկների մի զգալի մասն իրեն համարում էր հայերից սերված: Այսպիսով, Ս. Հովհաննեսի վաճֆի 1445 թ. կոնդակը հետաքրքիր և ուշագրավ աղբյուր է Արևմտյան Հայաստանի նաև էթնիկական պատմության ուսումնասիրության համար: Այն համադրելով այլ սկզբնաղբյուրների հետ՝ կարելի է ավելի հանգամանալից լուսաբանել, մասնավորապես, տվյալ կամայական Տարոնի և Աղձնիքի էթնո-դեմոգրաֆիական իրավիճակին առնչվող բազմաթիվ հարցեր:

Ս. Հովհաննեսի Թեմի ԲԱԼԱԿԱՎԱԹՐԻԸ Կոնդակում ամենից արժեքավորը վաճֆին ենթակա բնակավայրերի շարքն է, որը ստորև ներկայացնում ենք ամբողջությամբ, ըստ երեք ընդօրինակությունների՝ ֆենական համեմատության. «Էջանէ աստուածային ծորումն արեւուքեան... ճախ՝ ի Պէլ, (ի) Խոր(աւ)նք, ի Քուտ, ի Փողրկով, ի յերկաւ Ս(ն)ծնուտ, ի յԱրթիւանք, ի յԱզաղբիր, ի Շեխանք, ի Գլաղան, ի Տարմածին, ի Մլաջուր, ի Մաղկունք, ի Հովիտ, ի յՈւտուղ, ի Կորեկշուր, ի Կծու, ի Խորձավանք, ի Փարխաւ եւ յիւր մզրէնք, ի Վերս, ի Ճալկնուտ, ի յԱղջիշէն, ի Բերդ, ի Քարուտ եւ յիւր մզրէնք, ի յԱրծնք, ի Քիւմուտ, ի Խաչկանք, ի Սմալար, ի Սերկելիկ, ի Մոզաւն, ի յԱուտնոց, ի Կարմրիկ, ի Փէշար, ի Ճանածոր, ի դղեակն յիսպատ, ի յԱրգելք, ի Հերիքն, ի Քարուտ, ի յերէգ, ի յԱնտեւ, ի Մզակ, ի Սառնէս, ի Յոփում, ի գիւղաֆաղաֆն ԼԵՆ, ի Գումայ, ի դղեակն Սեւան, ի Բաղին եւ յիւր մզրէնք, ի Թիլ, ի Յիսին, ի Թրիսէ, ի Հրէտան, ի Սրտէ, ի Հայնի ֆաղաֆ, ի Տպէն, ի յԱպար, ի Զոռայ, ի Պալընքնք, ի յԸնդսլայիմ, ի յԱտախ, ի Ճումարիկ, ի Նունեաս, ի Քարոզ, ի Մըշրիկ, ի յԱրաւսք, ի Վանք, ի Զոլիսիկ, ի Հաւտնաւ, ի Հըզրաւ, ի Վանք, ի Թըրնըլ, ի Քըրքան, ի Զըկըշէն, ի Մուֆարդին, ի Հըսունք, ի Պատմանք, ի Պաշաք, ի Պաշմըքէ, ի Պաշխայ, ի Սլէմանի, ի յԱրտայ, ի յԱրխունք, ի Ճալգիկ, ի Սրէպայ, ի Պասմ, ի Պախընցաւ, ի Պախմըքէ, ի յիսպատ, ի Բացի, ի Պերմ, ի Հոնիկ, ի Վանք, ի Ճանանք, ի Սանտայ, ի յիշխնձոր, ի յԸնկուզնակ, ի Սեւիք, ի յԱրտկանք, ի Հեղին, ի յԱրս, ի Մեծ Փառկայ, ի Փառկայ, ի Սաղտունք, ի Շուղէք, ի Կէրէնտիկ, ի յԱհրաւնք, ի Գեղըվան, ի յԸնձաք, ի Վանք, ի Մսըրձոր, ի Կից, ի Յեհոր, ի Հարուիթոյ, ի Տըլիքթաւ, ի Փասուր, ի Կակուաս, ի յԱպտակէս, ի յԱպիգողէ՞, եւ ի գիւղաֆաղաֆն Կասգէ եւ յիւր գաւառաւքն»²⁵: Հիշված են ընդամենը 118 բնակավայրեր (չհաշված չորս մզրե-ագարակները), որոնցից ստույգ հայտնի է 108-ի, կասկածելի՝ 8-ի տեղագրությունը: Զի հաջողվել նշտել միայն 2-ը՝ Պասմ և Ապիգողէ՞²⁶: Բնակավայրերի քվարկումը սկսվում է Տարոնից և ընթանում թեմական սահմանների վերը նշված կարգով: Բնակավայրերը համակարգել ենք ըստ հետևյալ գավառների.

ա. ՏԱՐՈՆ. Ինչպես նշել ենք, Ս. Հովհաննեսին էին պատկանում գավառի հարավ-արևմտյան այն գյուղերը, որոնք գտնվում էին վաճֆի անմիջական հարևանությամբ՝ Հիմշիմայ-ջրից մինչև Արածանի: Կոնդակում դրանք 14-ն են՝

²⁵ Ա., Բ. 80աբ: Բ, էջ 200-201: Գ, էջ 141-142:

²⁶ Բ, էջ 201. «յԱպիգողն»:

Պլել, Խոր(ա)նք, Քոռուտ, Փողրկով, Ս(ն)ծնուտ(2), Արթխանք, Աւգադրիւր, Շեխանք, Գզլաղան, Տարմածին, Մլխաջուր, Մաղկունք, Հովիտ, Ուռուղ, որոնց տեղադրությունը, բացառությամբ Հովիտի, ստույգ հայտնի է: Տեղանունները հիմնականում անադարտորեն պահպանվել էին մաև 20-րդ դ. սկզբին, թեև մասամբ աղավաղվել կամ փոխվել էին²⁷: Ինչ վերաբերում է Հովիտ գյուղին, ապա բնակավայրերի թվարկման հաջորդականությունը թույլ է տալիս ենթադրաբար այն տեղադրել Մաղկունքից հարավ, Արածանու ոլորանի մոտ, ձախ ափին: Հարկ է նշել, որ այս շրջանում, որը 20-րդ դ. սկզբին հայտնի էր Հագնախ անվամբ, նույնպես հանդիպում է նույնանուն գյուղ²⁸: Եվ մի դիտողություն: Առում և Գռում, Ուռուղի ու Կորեկջրի միջև հանդիպում է «Յողկունք» («Յողկունք») գյուղ, ինչը, մեր խորին համոզմամբ, «Մաղկունք»-ի ձեռագրային աղավաղումն է, եետևաբար՝ թուրքիացաբար է մոցվել ընդօրինակության մեջ: Այն առանձին բնակավայր չենք դիտել, ուստիև ֆարսեզում չի հանդիպում:

բ. ԿԻՆՃ ԵՎ ՓԵՉԱՐ. Կոնդակում հիշատակվող 26 բնակավայրերից (Կորեկջրից մինչև Մզակ ներառյալ) 14-ը բաժին են ընկնում Կիննյան, մնացածը՝ Փեչարին: Նկատի ունենալով, որ վերոհիշյալ երկու գավառները գրեթե անձանոթ են ընթերցողին, դրանց բնակավայրերի մասին կխոսենք ավելի մանրամասն: Կիննյի բնակավայրերից մեզ հաջողվել է վերջնականապես նշտել 11-ի տեղադրությունը՝ Կծու, Փարխաւ (այժմ՝ Ferik), Վեքս (Virsek), Ճապկնուտ (Ganut), Առչիշեն (հետ.՝ Արշեն, թրք.՝ Arduşun)²⁹, Բերդ (հայտնի է մաև Կինն կամ Գինջ անունով, գավառի կենտրոնը, թրք.՝ Kaleköy կամ Genç), Քարուտ, Արծնք, Քիւմուտ, Խաչկանք (Haçık), Սերկելիկ (Serkevil): Որոշակի դժվարություններ են առաջանում միայն Կորեկջուր, Խորձավանք և Սմալար գյուղերը տեղադրելիս: 1-ինը հիշվում է Տարոնի բնակավայրերից անմիջապես հետո: Ըստ հաջորդականության՝ այն տեղադրել ենք Կծու գյուղից մի փոքր հարավ, Արածանու ձախ ափին գտնվող Gölcük լեռան մոտ (կարծում ենք՝ վերջինս Կորեկջուր տեղանվան թրք. աղավաղումն է): Ամենայն հավանականությամբ 1878 թ. ապրիլի 14-ին Դիարբեքիրի թեմի առաջնորդ Փիլիպոս Նաջարյանցի՝ Կ. Պոլսի պատրիարքարան ուղարկած գյուղացանկերում (ֆաղված Օսմանյան տարեգրից) Գիննյի («Կէնն») կազմում հիշվող Խորջուր գյուղը³⁰ նույն Կորեկջուրն է: Խորձավանքը հաջորդում է Կծուին: Փ. Նաջարյանցի արդեն նշված գյուղացանկերում ևս այն («Խոսրո-

²⁷ Այդ գյուղերն են՝ Քոռուտ>Քարծոր (թրք.՝ Kâsör), Տարմածին>Քուրդմեյդան (տե՛ս Բ. էջ 201), Մլխաջուր>Նավալիմուլ (ֆրդ.՝ «մլխաձոր», «ջուր»>«ձոր»>«գետ» համարժեքից: Հմմտ. թրք. Güzel-deresi, Sapor-deresi, Sason-deresi, Talori-deresi գետանունները ևն), Մաղկունք>Ջանգո (թրք.՝ Zengöç: Հմմտ.՝ Մոկունք>Mankok, Հոնկունք>Heriנגöç, Հավկունք>Hevingöç ևն):

²⁸ Վ. Պետոյան, Սասունի քարքառը, Եր., 1954, էջ 186:

²⁹ Վերջին ձևն ամենայն հավանականությամբ «Առչիշեն»-ի տարբերակներից է (արդյո՞ք դժվարեքն):

³⁰ Գրականության և արվեստի թանգարան, Թորոս Ազատյանի ֆոնդ, ցուցակ 3, գործ թիվ 50, թերթ 18 (այսուհետև՝ Նաջարյանց):

վանք» գտնվում է նույն գյուղից («Կազու») հետո³¹: Հաշվի առնելով այս փաստը՝ խորձավանքը տեղադրել ենք վերջինից մի փոքր հս.-արևմուտք՝ նույնացնելով Vrsik գյուղի հետ³²: 3-րդը բնագրում հանդիպում է «Սմպատ» ձևով: Մեր կարծիքով՝ սա գրչական սխալ է, որն առաջ է եկել ձեռագիր «բ»-ի և «տ»-ի հանախ հանդիպող շփոթից: Ուստի՝ գյուղի անունը սրբագրելով «Սմպար»՝ այն տեղադրել ենք «Խաչկանք» և «Սերկելիկ» բնակավայրերի մոտ (մանավանդ, որ հիշվում է դրանց հետ)՝ նույնացնելով ժամանակակից Sindar-ի հետ (իմ.տ.՝ վասպուրականում Բերկրու գյուղերից Սըմբ>Սընդ>Sind):

Փեչարի գյուղերից մեզբիտ տեղադրությունը որոշ չափով բարդացնում է նրանց անկանոն հերթականությունը: Բացի այդ, նույն շարքում հիշատակվող Ճանաձոր և Ռապատ («Ռապատ») բնակավայրերը գտնվում էին գավառակի սահմաններից դուրս: Դրանցից 1-ինը ներկայիս Cînzur կամ Cinezur (Փ. Նաջարյանցի մոտ՝ «Ճնեզուր»)՝³³ գյուղն է՝ Լճե գյուղախաղաքից հարավ: 2-րդը, որի մասին արդեն խոսել ենք (տե՛ս վանքի թեմի մեջ մտնող գավառներից վերաբերող մասը), Աղճնիքի 15-րդ դ. նշանավոր բերդախաղաքներից էր և գտնվում էր Փեչարից արևմուտք՝ պատմական Կոնստուր՝ լեռնանցքի շրջանում, ներկայիս Քաղֆիկ գյուղից շուրջ 5 կմ հյուսիս-արևելք՝ մտնելով սուլեյմանի քրդերի տիրույթի մեջ: Բերված փաստերը ցույց են տալիս, որ կոնդակի այս մասում կան հետագա միջամտություններ (Հ. Ոսկյանը ևս մատնանշում է այդ): Ձի քացառվում, որ մի քանի բնակավայրեր ավելի ուշ են ավելացվել, ինչն էլ խախտել է դրանց աշխարհագրական հերթականությունը: Ինչևէ, չնայած այս ամենին, մեզ հաջողվել է ճշտել հիշատակված 12 բնակավայրերից 10-ի տեղադրությունը: Դրանցից 4-ը՝ Մոզան (այժմ՝ Mezrun), Առևոնց (Abdos), Արգել (Arkilir), Հերֆին, գտնվում էին Սառում գետի վերին, նույնացնելով՝ Փեչար (Pîçar), Երեզ (Herezin), Անտու (Endif), Մզակ, միջին հոսանքի շրջանում: Ճանաձորը և Ռապատը, ինչպես վերը ցույց տվեցինք, չէին մտնում Փեչարի կազմի մեջ: Մի փոքր կասկածելի է միայն հետևյալ երկու գյուղերի տեղադրությունը:

1. ԿՈՐՄՐԻԿ. Բնագրում՝ «Կորմրիչ»: Մեր կարծիքով՝ սովորական գրչական սխալի հետևանքով վերջին «կ»-ն կարդացվել է «չ»³⁴: Կատարելով վերոնշյալ սրբագրումը, այն նույնացրել ենք Փեչարի հարավային սահմանագլխին գտնվող ժամանակակից Կորմրիկ (Kormik) գյուղի հետ³⁵:

2. ՔԱՐՈՒՏ. Մեր կարծիքով Փ. Նաջարյանցի գյուղացուցակներում հանդիպող «Քարաք» գյուղն է³⁶, որը, նկատի առնելով բնակավայրերի հերթականությունը,

³¹ Նաջարյանց, ք. 20:

³² Չշտթել Բերդի կամ Գեմչի մոտ, Արածանու հանդիպակաց ափին գտնվող նույնանուն գյուղի հետ (կոնդակում հանդիպող վերսը):

³³ Նաջարյանց, ք. 16:

³⁴ Ի դեպ, փիրղալեմյանի մոտ այս ձևով «Կակուաս»-ը դարձել է «Կաչուաս» (տե՛ս Գ, էջ 142):

³⁵ Նաջարյանցի մոտ «Գուրմըք», Լճեի կազմում (ք. 15):

³⁶ Նաջարյանց, ք. 24:

նույնանում է ներկայիս Xoz լեռան հյուսիս-արևելյան ստորոտին գտնվող Արգաթ (Argat) բնակավայրի հետ:

գ. ԲԱՂԻՆ ԵՎ ՍԵՎԱՆ. Կոնդակում Բաղին գավառի բնակավայրերից հիշվում են ընդամենը 4-ը՝ Բաղին, Թիլ, Թրխե, Յիին՝ որոնց բոլորի տեղադրությունը ստույգ հայտնի է: Դրանցից միայն Յիինն է ժամանակի ընթացքում աղավաղվել՝ դառանալով Սրին (թրք. Serin): Սևան բերդաֆաղաֆը («դղեակն Սևան») գտնվում էր Բաղինից արևելք՝ Դրնի գետի վերին հոսանքի շրջանում, Սևան-Մադենի լեռների մոտ: 19-րդ դ. վերջի երբեմնի նշանավոր այս բնակավայրը անշուք դժիկարմակ մի գյուղակ էր և կոչվում էր Ավնիկ³⁷: Սևան (Սիվան, Սևին) անունն անցել էր շրջակա երկու տասնյակից ավելի գյուղերից կազմված նահիիին, որը մտնում էր Դիարբեքրի վիլայեթի Բալուի կազայի մեջ:

դ. ՀԱՅՆԻ, ԼՃՆ ԵՎ ՍԼԵՄԱՆԻԿ. Կոնդակում հիշատակվում են այս գավառ-ների 12 բնակավայրեր, այդ թվում՝ Հայնին («Հայնի ֆաղաֆ»)՝ իր հինգ (Սրտե, Տպնե, Ապար, Ջըռայ, Պալըննե), Լճն («գիւղաֆաղաֆն Լճն»)՝ մերձակա երեք (Սառնէս, Յոփում, Գուլայ) գյուղերով, ինչպես նաև Սլեմանին: Այս շարքին ենք միացրել նաև Հրետան գյուղը՝ Ալլի (պատմ.՝ Անգղ, Անգեղ-բերդ) գավառից:

19-րդ դ. վ. - 20-րդ դ. վերահիշյալ բնակավայրերի մեծագույն մասը պահպանել էր կոնդակում ավանդված անվանումները: Անցնան փոփոխություն էր կրել միայն Ապարը (Anbar>Ambar): Հարկ է նշել, որ թրք. աղբյուրներում հանդիպում են նաև որոշ գյուղանունների տարբերակներ՝ Յոփում>Fum, Գուլայ>Cum, Հայնի>Hani:

ե. ՄՈՒՖԱՐՂԻՆ. Հիշատակված են համանուն ավանն իր շրջակա 5 գյուղերով (Հըսուն, Պատման, Պաշաթ, Պաշմըթե, Պաշխայ), որոնց բոլորի տեղադրությունը նույնպես ստույգ հայտնի է: 19-րդ դ. վ. - 20-րդ դ. սկ. աղբյուրներում վերոհիշյալ բնակավայրերից փոփոխված անվանումներով հանդես են գալիս հետևյալ 3-ը՝ Պատման>Malabadi (-o) կամ Malabari (-beri)³⁸, Պաշմըթե>Basimi³⁹, Հըսուն>Hersan (-san)⁴⁰:

զ. ՋՐՈՒՆԻԿ ԵՎ ԱԹԱԽ. Ս. Հովհաննեսի թեմին էին պատկանում 15 բնակավայր, որոնցից 8-ը՝ Ջըրնիկում (Ըոըսլայիմ, Ջըրնիկ, Հոտնաւ, Հըզրաւ, Վանֆ, Թըրնըլ, Քըրֆան, Զկըշեն), 7-ը՝ Աթախում («դղեակն») Ատախ կամ Աթախ⁴¹, Ճումարիկ, Նունեսա, Քարոզ, Մըշքիկ, Արաւսֆ, Վանֆ):

³⁷ Այս գյուղը Ա. Մ. Կոլլուբակիների մոտ հիշված է Ազըվնիկ ձևով (տե՛ս «Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции», т. 3, часть 2, Т., 1890, стр. 78): Հիշյալ ձևն առաջ է եկել Սևանի աղավաղումից՝ Սևան+իկ>Սևնիկ>Ջևնիկ>Ջըվնիկ, որտեղից առկա «ա»-ի հավելումով՝ Ազըվնիկ > Ավնիկ (եմֆ. Քղիի գյուղերից՝ Վարդենիկ > Ավրդենիկ):

³⁸ Ռուսական 5-վերստանոց քարտեզ, Դ-11 պլանշետ: Ամենայն հավանականությամբ Malabari (مالابري) ձևն առաջ է եկել արաբ. ا ل ا տառերի շփոթից: Գյուղը կոչվել է նաև Փրեքաթման (Գ. Սրվանձոյանց, Նրկեր, հտ. 1, նր., 1978, էջ 75):

³⁹ Հայկ. աղբյուրներում՝ «Պաշմըթե» կամ «Պաշմըթ»:

⁴⁰ Գտնվում էր համանուն լեռան (թրք. Hizin) ստորոտին:

⁴¹ Աթախը պատմ. Հայաստանի նշանավոր բերդաֆաղաֆներից էր՝ հայտնի դեռ 4-5-րդ

Հետաքրքրությունն են ներկայացնում հետևյալ բնակավայրերը.

1. ԶԸՌԻԽԻՎ. Համանուն գավառի գյուղերի շարքում նշվում է առաջինը, ապա հաջորդում են «Հոտնու»-ը, «Հըզրու»-ը, «Վանք»-ը ևն: Նման հերթականությունը մեզ թույլ է տալիս գյուղը նույնացնել Միհրանի (թրք. Mihran) կամ Mireni) բնակավայրի հետ, որի անունով, ինչպես նշել ենք, շրջակա գավառակը կոչվում էր Միհրանիկ: Վերջինս 15-րդ դ. 1-ին կեսին, ինչպես տեսանք, դեռ Զըռըխիկի մի մասն էր (արևելյան հատվածը): Մեր կարծիքով՝ ավելի ուշ, երբ Միհրանիկը (Միհրանին) առանձնացել և դարձել էր ինքնուրույն գավառ (օջափլք), անունը փոխանցեց կենտրոնին՝ Զըռըխիկ (ինչը սովորական երևույթ էր). որն էլ այդուհետ սկսեց կոչվել Միհրանի: Զըռըխիկ (Զըռըկան) անունը պահպանվեց նախկին գավառի արևմտյան մասի վրա, որը 16-19-րդ դդ. կոչվում էր նաև Թարջիլ կամ Թերջիլ՝ կենտրոնը հանդիսացող համանուն բերդաֆաղաֆի անունով (կոնդակում «Թըռզըլ» կամ «Թըրճըլ», հիշվում է որպես «աւան»): Ավելի ուշ, 19-րդ դ. 2-րդ կեսին, Թարջիլի անկումից հետո, Զըռըխիկի (Զըռըկանի) կենտրոնը տեղափոխվեց հարևան Հազրո (կոնդակում՝ «Հըզրու») գյուղաֆաղաֆ:

2. ՎԱՆ-ԲԵՐ. Սրանցից 1-ինը Ս. Մակարայեցվոց կամ Առափնոց (Աթխու) վանքն է՝ Աթախից մի փոքր հյուսիս-արևելք, որն իր ենթակա գյուղերի հետ 15-րդ դ. 1-ին կեսին անցել էր Ս. Հովհաննեսի գերատեսչությանը (տե՛ս 1-ին ենթագլուխը): 2-րդը Հազրոյի մոտակա Այնըրըրդի Ս. Աստվածածնի վանքն է (թրք. İbnik)⁴²:

3. ՄՇՐ-ԲԻԿ. Տեղադրել ենք ներկայիս Mustif գյուղի տեղում: Մեր խորին համոզմամբ՝ սա «Մշրֆիկ»-ի արաբագիր ազավաղման հետևանքն է, որ գալիս է 3 և 4 տառերի շփոթից (م ش ر)⁴³: Ժամանակի ընթացքում սխալ տարբերակը պաշտոնականացանալով՝ դուրս է մղել ճիշտ ձևը:

Նշված գավառների բնակավայրերի մի մասի անվանումները ևս 19-րդ դ. վ. 20-րդ դ. սկ. փոփոխվել էին՝ Հոտնու>Hondof⁴⁴, Բըրֆան>Kekan⁴⁵, Ջլրշեն (նախնական Ջուկ/խ/ուր+շեն)>Zur⁴⁶, Բարոզ >Kervez⁴⁷, Արաւս >Aruszazam):

դդ.: Ումմեյյան տիրապետության ժամանակ (մինչև 19-րդ դ. 1-ին կեսը) համանուն օջափլքի (թրք. Atak) կենտրոնն էր: 19-20-րդ դդ., աստիճանաբար տեղափոխվելով, Աթախը վերածվել էր հիմնականում բրդաբնակ գյուղի: Հայկ. աղբյուրներում հանդիպում է Անթաղ կամ Այնթաղ անուններով (թրք. Atak կամ İntak):

⁴² Նաջարյանց, Թ. 39՝ «Վումանե Այնիպրգ»: Կոչվել է նաև Գուման (Գ. Սրուսանձտեանց, Թորոս-աղբար, հտ. 2, Կ. Պոլիս, 1884, էջ 237: Տե՛ս նաև՝ ԳԱԹ, Գ. Սրվաճաթյանցի ֆոնդ, «Լրացուցիչ նյութեր», գ. Թիվ 23, Բ. 3):

⁴³ Ի դեպ, Ասիական Թուրքիայի ֆարսեզի ռաւսերեն պատեններում այս գյուղը նշված է «Мишрак» ձևով («V-14: Папы» պլանշետ):

⁴⁴ Հայկ. աղբյուրներում՝ Հոտնով:

⁴⁵ Նաջարյանց, Թ. 37՝ «Բաւան»:

⁴⁶ Գյուղի մոտ, 20-րդ դ. սկ. դեռ պահպանված վանքը կոչվում էր «Ձխրի» (Յարուբիւն Ղազարեան, Հազրոյ, ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., ց. 3, գ. 12, Բ. 1):

⁴⁷ Կարծում ենք՝ սա նույնպես արաբատառ գրության սխալ ընթերցման հետևանք է. Կարեւի է կարդալ և՛ «Բարոզ» և՛ «Բերվեզ»:

է. ԿՈՂԲ(ՆԱՀԻԱ)⁴⁸ եՎ «ԳԱԶԿՈՒ ԳՍԻԱՌ»։ Կոնդակում հիշվում են 39 բնակավայրեր, որոնցից Կոլբում էին 34-ը՝ Արաայ, Արխունք, Ճաւգիկ, Սրեպայ, Պասմ, Պախըռնաս, Պաքըմթէ, Ռապատ, Բացի, Պերմ, Հոիկ, Վանք, Ճաճանք, Սանտայ, Իշխնձոր, Ընկուզնակ, Սեւիթ, Արտկանք, Հեղիճ, Արս, Մեծ Փառկայ, Փառկայ, Սաղտուն, Շուղէք, Կերեճակ, Ահրանք, Գեղրվան, Ընձաք, Վանք, Մաքըռնոր, Կից, Յեհոր, Հարուիթայ, Փասուր։ «Գազկու գաւառ»-ի բնակավայրերը 5-6 հմ՝ համանուն գյուղաքաղաքը (կոնդակում՝ «Կասգէ»), Տըլիքթաւ, Կակուաս, Ապտակէս, Ապիգողէ՝։ Նշված բնակավայրերից չի հաջողվել նշտել միայն հետևյալ 2 գյուղերի տեղագրությունը (ֆարտեզում տեղ չեն գտել)։

1. ՊԱՍՄ. Ըստ Ղ. Փիրդալեմյանի՝ 19-րդ դ. վերջին ֆառադին ավերակ էր⁴⁹։ Անունն արտաքին նշանություն ունի Հագրոյից հարավ-արևելք գտնվող Bazzmar-ի հետ, սակայն թվարկման հերթականությունը բացառում է այդ։

2. ԱՊԻՋՈՂԷ(ԱՊԵՂՈՂՆ). Աղբյուրների պակասը հնարավորություն չի տվել անգամ վերջնականապես նշտել գյուղի անունը։ Կարծում ենք, այն նույնական է 1688 թ. գրված մի Ավետարանի հետագայի հիշատակարանում հանդիպող «Ապտոզողան» («Ապտոզողան» - Գ. Բ.) բնակավայրին⁵⁰։ Կասկածից վեր է միայն, որ գյուղը գտնվում էր «Գազկու գաւառ»-ում և, ինչպես ցույց է տալիս բնակավայրերի թվարկման հերթականությունը, այն պետք է փնտրել «Ապտակէս»-ի (հետագայում՝ Թիախս) և «Կասգէ»-ի (Գազկե) շրջանում։ Ի դեպ, դրանցից առաջինը, ըստ ժամանակակից ֆարտեզագրական նյութերի, 20-րդ դարասկզբին կազմված էր առանձին գյուղակ-«թաղերից», ինչը սովորական երևույթ էր ինչպես Սասունում, այնպես էլ մյուս հայկական լեռնագավառներում։ Ձի բացառվում, որ «Ապիգողէ» - «Ապեղողն» - «Ապտոզողան» գյուղը ժամանակի ընթացքում, միաձուլվելով «Ապտակէս» - Թիախսին, դադարել է դիտվել որպես առանձին բնակավայր։ Ցավոք, այդ գյուղակ-«թաղերի» անվանումները մեզ հայտնի չեն, ինչը, մեր կարծիքով, կտար հարցի վերջնական պատասխանը։

Որոշակի հետաքրքրություն են առաջ բերում երկու «վանք»-երը։ Դրանցից առաջինը, որը հիշված է «Ճաճանք» գյուղից առաջ, նույնացրել ենք վերջինիս մոտակա Հեշտերի (Հեշթերի) հետ, ուր 20-րդ դ. սկզբին դեռ պահպանված ավերակ եկեղեցու շրջակայքի հողերը («Ջավիա դերե» («վանքի ռոդ», ընդգծումը մերն է - Գ. Բ.) էին կոչվում⁵¹)։ Երկրորդ «վանք»-ը նշված է «Ընձաք»-ից հետո, որն էլ մեզ թույլ է տալիս նույնացնել այն գյուղի նշանավոր Սուրբ Գևորգի հետ։

Ստանյան տիրապետության ընթացքում վերածիշյալ բնակավայրերի մի մասը ձեռք էր բերել նոր անվանումներ, որոնք հանդիպում են գերազանցապես պաշտօնական վավերագրերում, ինչպես նաև տեղի բուրդ բնակչության մոտ։ Ստորև ներկայացնում ենք այդ բնակավայրերը՝ Սրիպայ>Herir, Բացի>Bekis, Պերմ>Parmis, Արխունք>Herent, Հոիկ>Hells⁵², Վանք>Hester, Ճաճանք>Cacas⁵³,

⁴⁸ Կոլբի մեջ ենք ընդգրկել մաս Ռապատ Սահիամ։

⁴⁹ Գ, էջ 142։

⁵⁰ Բ, էջ 180։

⁵¹ Պետոյան, էջ 183։

⁵² Ըստ երևույթի, եղել է մաս Հոիկ > Հր(լ)իկ տարբերակը, որից էլ առաջ է եկել

իշխնոք>Akcasir, Սեւիք>Süit, Ընկուզակ>Güzak, Հեղին>Helin, Արս>Ersik, Փառկայ>Firke, Սաղաուն>Saltan, Շուղէֆ>Şinaz, Կերէնտիկ>Girindis⁵⁴, Ահ-բաւնիֆ>Hinzi, Ընծֆար>Askar, Մսընոք>Gelimansur⁵⁵, Կից>Kiz, Հարուի-թոյ>Herbat, Տըլերէթաւ>Tildir⁵⁶, Ապտակէս>Tiyakus⁵⁷, Կասգէ (Գասգէ, Գագկէ) >բրֆ. Ciks:

Կոնդակը մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև Ս. Հովհաննեսի անմեջական մերձավոր կապվածքների, ազարակների և արոտավայրերի, մի խոսքով՝ հողային տիրույթների մասին: Հաշվի առնելով այդ հատվածի տեղանվանագիտական առումով ներկայացնող եետաբեկությունը, ավելորդ չենք համարում ստորև այն ներկայացնել ամբողջությամբ (ինչպես միշտ՝ կոնդակի 3 ընդօրինակությունների համեմատությամբ)։ «Այլև, Սուրբ Աթոռոյս հանդեւ սինաւն»⁵⁸ այս է՝ առուակաւնն Յերկէն, Արաւսիկ, Դարբնաձոր, Հորու-Ձորովն մինչև ի Ղզլաղաւն, Վերին Դերաւնաւաւաւ մինչ ի Սնճուտայ վերեւն, Քաշուրովն մինչ յէմին Թափաւն եւ Քուտսն Տերընաղբիւր մզրայ է, ջրի անդին խորանից է, ալադին՝ վանից: Երեւ աղբիւր կայ ի Բըլէլի ձորն՝ վանիցն է, մինչև ի յառուակաւն Քարխըջի Ջուրն՝ վանիցն է, քամ Տատրիսգումու, սինաւ խոտընճին հանտակն, Գետի փուլ, Պաւլոսի երնի, Նաւապարհն, Նուկնին՝ մինչև ի հանտակն»⁵⁹: Յավօք, նշված հատվածը շատ կողմերով մուծ է մեզ համար, քան որ եիշվող առվակների, հանդամասերի, աղբյուրների, ձորակների և ազարակ-մզրաների մեծագույն մասի տեղադրությունն անհայտ է: Այն հնարավոր կլինէր նշանել միայն ժամանակին կազմված ճշգրիտ և մանրամասն տոպոգրաֆիական քարտեզների, ինչպես նաև հանգամանակից տեղեկագրերի հիման վրա, որոնք բացակայում են: Չպետք է մոռանալ նաև տեղի հայ բնակչության գրեթե գլխավոր բնաշնչման փաստը 1916 թ., որը նույնպես վնասակա դեր է ունեցել եիշյալ տարածքի միկրոտոպոգրիկայի մոտոպման կամ հիմնովին փոխվելու համար: Այնպես որ կարելի է ասել, որ այդ տեղանունները գերազանցապես անդառնալիորեն կորած են: Այնուամենայնիվ առանձին ճշխարհներ պահպանվել են, և դա հիմնականում տպատեղ ավելի ուշ տոտալացած նոր գյուղերի շնորհիվ: «Տատրիս-գում»-ը (տարբերակ՝ «Տատրագում», բրֆ. Dazikom), որը նույնպես մինչև Մեծ

վերսիշյալ ձևը:

53 Նախնական «ձառնաց» ձևից:

54 «Կերենտիկֆ» տարբերակից:

55 Ըստ էության սա տեղանվան ֆրոնտիս պարզ բարգմանությունն է: Ընդ որում, 19-20-րդ դդ. հայկական աղբյուրներում հանդիպում է նեմց երկրորդ ձևը (Գալիսմասուր, Գելիսմասուր ևն):

56 19-20-րդ դդ. հայկ. աղբյուրներում՝ Թըլթաֆ, Թըլթըվ ևն:

57 19-20-րդ դդ. հայկ. աղբյուրներում՝ Թիախս:

58 «Սինոռ» բուն իմաստով նշանակում է «սախման» (հունարեն՝ σπονδες-ից): Սակայն այստեղ այն ունի «աջատավայր», «ամստուններ արածացնելու տեղ» իմաստը: Ի դեպ, բառս երկու իմաստով՝ առ ցայսօր հաստատվում է Ջավախքի գյուղաբնակ հայերի շրջանում (Գ. Բ.):

59 Ա, Բ. 81բ: Բ. էջ 202: Գ. էջ 143:

նդեռնը հայաբնակ էր, վանքի հարավակողմում էր՝ Սասունի նախալեռնային գոտում (որոշ աղբյուրներ այն հիշատակում են հենց լեռնագավառում)⁶⁰։ Ենթադրելի է, որ «Հորու-Ձոր» է կոչվել Ա. Հովհաննեսից մինչև Կզըլաղաչ գյուղ ձգվող ձորահովիտը, իսկ Վարդենիք (սեռ.՝ «Վարդենից») և Վերին Վարդենիք տեղամասերն ամենայն հավանականությամբ գտնվել են Խորոմքի հարևանությամբ ևն։

Այսպիսով, կոնդակի ճշված հատվածները խիստ հարուստ նյութ են պարունակում ինչպես տեղանվանագիտության, այնպես էլ լեզվաբանության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության վերաբերյալ, ինչը լրացուցիչ անգամ քարծրացնում է այդ եզակի փաստաթղթի արժեքն ու նշանակությունը։

Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԻ ԹԵՄԸ ՀԵՏԱԳԱ ԴԱՐԵՐՈՒՄ. Կոնդակում հիշատակվող գավառները, գրեթե առանց քացատության, վանքի հոգաբարձությանը շարունակեցին պատկանել նաև հետագա հարյուրամյակների ընթացքում։ Այսպես, 18-րդ դ. վերջի - 19-րդ դ. սկզբի վարչա-ֆառափական վիճակն արձանագրած Ղ. Իճեհյանը նշում է, որ «թեմ մեծաստանիս են գիւղօրայք Մշոյ՝ որք անկանին ի հարաւակողմն Եփրատայ, սկսեալ յարևմտից գաւառին մինչ ի գիւղն Խորոմք, և Քարծոր. նաև վիճակքն Կիճն և Խուլիս»⁶¹։ Ինչպես արդեն նշել ենք, հեղինակը վանքին ենթակա գավառներից հիշում է նաև Իսլանը («Պանօցոց երկիր»)՝⁶²։ Լճնի, Հայնիի և Սիլվանի թեմական պատկանելության մասին Ղ. Իճեհյանը մեզ անհայտ պատճառներով ոչինչ չի հաղորդում։ Ինչ վերաբերում է Բաղին գավառի 4 գյուղերին, ապա դրանք այդ ժամանակաշրջանում լիովին անցել էին Բալախովտի նշանավոր Քաղցրահայաց Ա. Ասովածածին վանքին (Հավալ գյուղի մոտ)⁶³։ Հույժ կարևոր տեղեկություններ է պարունակում «Հայկի գործոց Տիգրանահան Մկրտիչ վարդապետի և առաջնորդի Քիրտիսթանու» գիրքը (Կ. Պոլիս, 1864)։ Հեղինակի տվյալներով՝ 1840-50-ական թթ. (իր առաջնորդ եղած ժամանակ) Ա. Հովհաննեսի թեմին էին պատկանում «Տէրիկ, Տարայ, Հայնի, Լճն, Հագրոյ, Մէրալնի, Սիլվան, Խիւան, Գուլք, Յաւետի, Փեչար, և Մշոյ դաշտին մէջ ալ տասը կտար գիւղօրայք. 100 գիւղ. տունք 3700. անձինք 29600»⁶⁴։ Ինչպես տեսնում ենք, Ա. Հովհաննեսի վանքը ոչ միայն պահպանել էր 1445 թ. կոնդակում հիշատակված գավառները, այլև ձեռք էր բերել նորերը՝ Դարան և Դերիկը (Մծրինի շրջանում)⁶⁵։ Ուշագրավ են Մ. Տիգրանյանի այն տեղեկությունները, որ Հայնին, Լճն, Փեչարը սկզբնապես պատկանել են Աթախի Ա. Մակարայեցվոց-Առաքելոց վանքին, և «ապստամբութեան Քրթաց ժամանակին, աւուրք Օհաննէսցիք յափշտակած են»⁶⁶։ Ինչպես երևում է, թեմերն ընդարձակելու համար պայքարը երկու վանքերի միջև

60 Տատրիսգոմի մասին տե՛ս նաև Խաչուրդ ենթագլխում։

61 Իճեհյան, էջ 198։

62 Ն. տ., էջ 249։

63 Իճեհյան, էջ 226։

64 Տիգրանյան, էջ 7։

65 1878 թ. Դերիկը («Տէրեկ») Դիարբեքիի առաջնորդությամբ ենթակա թեմերից մեկն էր (Գ. Սրվանձությանց, Թորոս-աղբար, էջ 232)։

66 Տիգրանյան, Գ. տ.։

շարունակվել է նաև հետագայում⁶⁷։ Մ. Տիգրանյանի տվյալները ցույց են տալիս, որ Ս. Մակարայեցվոց վանքի միաբանությանը, այնուամենայնիվ, հաջողվել է հոսքերի կորցրած տիրույթները, որոնք, սակայն, նշանավոր Բաղր-խանի ապստամբության ժամանակ (1840-ական թթ.) վերստին անցել են Ս. Հովհաննեսին⁶⁸։ Հետաքրքիր է նաև, որ 19-րդ դ. 2-րդ կեսին վանքին ենթակա գյուղերի թիվը գրեթե չի տարբերվում կանոնակամ նշվածից։ Ս. Հովհաննեսի մասին տեղեկություններ է հայտնում նաև արևմտահայ նշանավոր հասարակական-հաղափական գործիչ Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ)։ Խոսելով, մասնավորապես, վանքի թեմի 1880-ական թթ. վերջի վիճակի մասին, նա գրում է. «Թեմերն ալ ընդարձակ են, 12 գիւղ Մշոյ դաշտին մէջ, որք վանքին են սահմանակից, իսկ ի ներքին դաշտ (Տիգրանակերտ) նոյնպէս թեմ են հետեւեալ գաւառներն իրենց բոլոր հայաբնակ գիւղերով։ 1. Խուլի, 2. Խիան, 3. Հավետան, 4. Սլիվան, քանի մը գիւղ ի Պշերի և Զըռքան, Հազրո, Լնէ, Հայնէ գիւղախառններն...»⁶⁹։ Ցավոք, նոր շրջանի վերաբերյալ այլ աղբյուրներ մեզ հայտնի չեն։ Կարելի է միայն ենթադրել, որ հետագա տասնամյակներին՝ ընդհուպ մինչև 1915 թ., թեմական սահմաններն էական փոփոխություններ չեն կրել։ Մեզ հայտնի չէ նաև Ս. Հովհաննեսին ենթակա բնակավայրերի քանակը 20-րդ դ. սկզբին (այս տեսակետից կանոնակարգող եզակի է)։ Եթե շուրջ 480 տարվա ընթացքում թեմի որոշ գյուղեր անցել են այլ վանքերի (Բաղին գավառակի օրինակը), ապա եղել են նաև նոր ձեռքբերումներ։ Ստույգ հայտնի է, որ վանքն ընդարձակ կալվածքներ ուներ շրջակա Ավագիող կամ Ավգուխ (Աւծնող=Օծնող, հմմտ. նույն Տարոնում Ավգադբուր<Աւծադբուր, Ավգուտ<Աւծուտ տեղանունները), Կյալախուլի (Կյալախուլի) և Տատրագում (Տատրքագում) գյուղերում⁷⁰։ Եթե դրանցից առաջին երկուսը կոնդակում ընդհանրապես չեն հիշատակվում, ապա երրորդը, ինչպես վերև արդեն գրել ենք, նշված է օրացես տեղավայր։ Այս բնակավայրերն առաջ են եկել բավական ուշ, ընդ որում նախապես եղել են գոմեր, ինչպես հուշում են Տատրիսագում (Տատրագում) տեղանունը և Ավագիողի Սիրոյիգումբ երկրորդ անվանումը։ Ի դեպ, մեր խորին համոզմամբ, վանքապատկան էր նաև մոտակա Գոմեր գյուղը, որն իր անունը ստացել է տեղում սկզբնապես վանքի անասնագոմերը լինելու պատճառով։ Լուրջ փոփոխություններ էին տեղի ունեցել նաև բնակչության ազգային կազմում։ Տարբեր աղբյուրների տվյալների համաձայն⁷¹, 1870-ական թթ. վերջին, կոնդակում հիշատակված 118

⁶⁷ Հայտնի է, որ դեռ 1782 թ. ամառվում փորձեր են եղել Հազրո, Հայնի և Լճի գավառները հանձնելու Ս. Մակարայեցվոց վանքին (Ոսկյան, էջ 125)։

⁶⁸ Զենք բացառում, որ վանքի միաբանությունն այդ արել է վերոհիշյալ ազդեցիկ քրդի զգույթյամբ։

⁶⁹ Գեղամ, Մշոյ Ս. Յովհաննես վանքը, «Արևիկ», Կ. Պոլիս, 1889, թիվ 1682, էջ 3։

⁷⁰ Ոսկյան, էջ 127։

⁷¹ Ոգտագործել ենք հետևյալ աղբյուրները՝ Նաշարյանց, Թ. Գ-41։ Պ. Նախունեան, Արտուր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Պարբերդու, Զարսանագի, Ճապաղ-չուրի և Երզնկայու, Կ. Պոլիս, 1883։ Գ. Սրուճանեանց, Թորոս-աղբար, հտ, 2, Կ. Պոլիս, 1884, էջ 166-167, 234-241։ Ա. Տեր-Սարգսեանց (Տեկեանց), Այցելութիւն ի

բնակավայրերից (առանց «Ապիգոդէ»-ի և «Պասմ»-ի) հայեր բնակվում էին միայն 80-ում, որից 42-ում՝ քրդերի, գվիկների, մասամբ նաև ասորիների և հույների հետ: Լրիվ հայաթափ էին եղել 28, ավերվել՝ 8 գյուղեր⁷²: Բնակացարար, այլազգաբնակ՝ դարձած գյուղերն այլևս չէին ենթարկվում վանքին (որոշ վերապահումով՝ նաև ավերված և ամբարդաբնակ դարձածները): Այս ամենով հանգեւոր, Ս. Հովհաննեսը շարունակում էր մնալ Արևմտյան Հայաստանի խոշոր վանական հաստատութիւններից մեկը, որին 20-րդ դ. սկզբին դեռ պատկանում էին տասնյակ բնակավայրեր՝ բազմահազար հայ բնակչությամբ:

Մեծ Եղեռնի ժամանակ Ս. Հովհաննեսի վանքը կողոպտվեց և ավերվեց, ոչնչացվեցին նրա արժեքավոր ձեռագրերը, այդ թվում՝ կոնդակը: Բնաջինջ եղավ նաև վանքապատկան բնակավայրերի հայութունը, որի սոսկ անցնշան մասը փրկվեց՝ աշխարհասփյուռ լինելով:



Հայաստան, Մաշտոցի անվան Մատենադարան, «Զանգակատի հեղինակների ֆոնդ», թղթապանակ թիվ 54, վավերագիր 13/5, ք. 14ա-19բ:

⁷² Առանձին բնակավայրերի մասին տեղեկությունները վերցրել ենք Ղ. Քիրաչյանից: